ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
KOTAYK MARZ
MUNICIPALITY OF TSAKHKADZOR

2310 ք. Ծաղկաձոր Օրբելի եղբ. 10 Tsakhkadzor city Orbeli Br.10
Հեռ.Tel.: (+374 223) 6-04-02, 6-04-03

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով
ընթացակարգի շրջանակներում
գրանցված մասնակիցներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագծի N1 հավելվածում նշված ապրանքները:

Տեղեկացնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Կոտայքի մարզ, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեով, մինչև 2015թ. փետրվարի 20-ը, ժամը 10 ⁰⁰-ը:

Հայտերը կբացվեն ՀՀ Կոտայքի մարզ, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում, 2015թ. փետրվարի 20-ին, ժամը 10 ⁰⁰-ին:

Հայտը ներառում է գնային առաջարկը և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցության մասին դիմումը:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԾՔ-ՇՀԱՊՁԲ-15/1»:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մեր էլեկտրոնային հասցեն՝ meria@tsakhkadzor.am :
Հեռ.022360402

ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող Տ.Պետրոսյան

Հավելված 1

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով

ընթացակարգի հրավերի

ԾՔ-ՇՀԱՊՁԲ-15/1 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

ԴԻՄՈՒՄ

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____-ի կողմից N<<ԾՔ-ՇՀԱՊՁԲ-15/1>> ծածկագրով
Պատվիրատուի անվանումը

հայտարարված ընթացակարգի _____ չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն

_____ _____
Մասնակցի անվանումը և (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված 2

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով

ընթացակարգի հրավերի

ԾՔ-ՇՀԱՊՁԲ-15/1 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով ԾՔ-ՇՀԱՊՁԲ-15/1 ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____ առաջարկում է պայմանագիրը
Մասնակցի անվանումը
կատարել հետևյալ գնով՝

(ՀՀ դրամ)

Չափաբա ժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1				
2				
3				

**3-րդ սյունակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*

***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում*

_____ _____
Մասնակցի անվանումը և (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը

Կ. Տ.

ՆԱԽԱԳԻԾ

«Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար սննդամթերքի

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԾՔ-ՇՀԱՊՁԲ-15/1

ն. Ծաղկաձոր ___ _____ 2015 թ.

«Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը ի դեմս տնօրեն՝ Մ.Ասատրյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, « » ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝Տեխնիկական բնութագրով նախատեսված«Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար սննդամթերքի /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

3.Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատճաշ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե գնորդը վաճառողի կողմից պարտականությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանք այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատճաշ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Ջնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3. Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականցվել գործակալության պայմանագիր կնքելու միոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետներում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջին վնասները:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմահագրի ընդհանուր գինը կազմում է՝ (----------) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավոր գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայն վճարման ժամանակացույցի:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված 4) և Ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի պատճենը: Եթե Ապրանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ, ապա նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի ներկայացվում:

6.2 Արձանագրություն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) Հարցի կանոնավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնված Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղն, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2015թ. դեկտեմբերի 30-ը:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանարի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցե իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

- պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները խնայողություններ և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասներն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում կատարողի կնքած այդ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է …… էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած են ---- էջից, հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունք:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ **Վ ա ճ ա ռ ո ղ**

«Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

Հասցե՝ ք.Ծաղկաձոր, Խ,Կեչառեցու 1ա

ՀՎՀՀ 03008231

Արարատ բանկ ԲԲԸ

ՀՀ 1510003052690100

Տնօրեն՝ Մ.Ասատրյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

_____2015թ. N ԾՔ-ՇՀԱՊՁԲ-15/1
ծածկագրով պայմանագրի

Ապրանքի տեխնիկական բնութագիրը

Չ/հ	Ապրանքի անվանումը	Ապրանքատեսակի նկարագիրը	Տեխնիկական բնութագիրը	Չ/մ	Քանակ	Մատակարարման ժամկետը
1	2		3	4	5	
1	**հաց**	հաց, հրազդան	Ցորենի 1-ին տեսակի ալյուրից պատրաստված: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	Կգ	1400	օրական
2	**կարագ**	կարագ, սերուցքային	Սերուցքային, յուղայնությունը՝71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով: Անվտանգությունը և մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջներիտեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված	կգ	160	շաբաթական
3	**կաղամբ**	կաղամբ, մաքրած	Թարմ գլուխ կաղամբ՝ մանրածախ առևտրի ցանց և հանրային սննդի օբյեկտներ մատակարարման և իրացման համար: Թարմ գլուխ կաղամբն ըստ հասունացման ժամկետների ստորաբաժանվում է հետևյալ տեսակների, վաղահաս, միջահաս և ուշահաս: Արտաքինտեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, մաքուր,առողջ, լիովին ձևավորված, առանց հիվանդությունների, չծլած, տվյալ բուսաբանական տեսակին բնորոշ գույնով. ձևով ու համ ու հոտով, առանց կողմնակի հոտի և համի: Կաղամբի գլուխները չպետք է լինեն գյուղատնտեսական վնասատուներով վնասված, չպետք է ունենան ավելորդ արտաքին խոնավություն, պետք է լինեն խիտ կամ քիչ խիտ, բայց ոչ փխրուն, վաղահաս կաղամբը՝ տարբեր աստիճանի փխրունությամբ: Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն մինչև մակերևույթը ամուր գրկող կանաչ և սպիտակ տերևները: Վաղահաս կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն վարդաձև տերևաբույլերից և օգտագործման համար ոչ պիտանի տերևներից: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Կաղամբի մաքրված գլուխների քաշը ոչ պակաս՝ 0.8 կգ, վաղահաս կաղամբինը՝ 0.3- 0.4 կգ: Ճաքած և 3 սմ-ից ոչ ավելի խորությամբ, մեխանիկական վնասվածքներով կաղամբի գլուխների զանգվածային մասը՝ 5%-ից ոչ ավելի: 3 սմ-ից ավելի խորությամբ մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, նեխած, գյուղատնտեսական վնասատուներով վնասված, ցրտահարված, շոգեհարված՝ միջուկի դեղնվածության և կարմրածության նշաններով գլուխների առկայություն չի թույլատրվում: Չի թույլատրվում նշահատված գլուխներով և կաղամբակոթերով կաղամբի առկայություն: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ բանջարեղենիտեխնիկական կանոնակարգի» և	կգ	380	շաբաթական

			«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀօրենքի 8-րդ հոդվածի:			
4	**թթվասեր**	թթվասեր, տեղական	Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 0Т, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %	կգ	20	շաբաթական
5	**մակարոնեղեն**	մակարոն	Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ А (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), В (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	250	շաբաթական
6	**կարտոֆիլ**	կարտոֆիլ	Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, կլոր ձվաձև 4 սմ, 5%, երկարացված 3,5սմ, 5 %, կլոր ձվաձև (4-ից 5) սմ 20%, երկարացված (4-ից 4,5) սմ 20%, կլոր ձվաձև (5-ից 6սմ) 55%, երկարացված (5-ից 5,5) սմ 55%, կլոր ձվաձև (6-ից 7) սմ 20%, երկարացված (6-ից 6,5) սմ 20%: Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	1600	շաբաթական
7	**Ճակնդեղ**	Ճակնդեղ, արմատապտուղ	Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Արմատապտուղների չափերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%:	կգ	90	շաբաթական
8	**գազար**	գազար	Սովորական և ընտիր տեսակի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	96	շաբաթական
9	**միս տավարի**	տավարի միս, տեղական ոսկրո	Տավարի կիսամսեղիքով, պիտակավորված, ընդհանուր քանակի 20%-ից ոչ ավելին 2-րդ կարգի տավարի միս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Միս և մսամթերքի տեխնիկականկանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	110	շաբաթական

10	**վաֆլի**	վաֆլի	Միջուկով և առանց միջուկի չափածրարված կամ առանց չափածրարման, ԳOUS 14031-68 կամ համարժեքը: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	50	շաբաթական
11	**շաքարավազ**	շաքարավազ սպիտակ	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել, պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին սահմանված ժամկետի 50%-ից ոչ պակաս: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	450	շաբաթական
12	**բրինձ**	բրինձ	Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի.	կգ	150	շաբաթական
13	**թխվացքաբլիթ**	թխվածքաբլիթ	Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված, խոնավությունը՝ 3 %-ից մինչև 10 %, շաքարի զանգվածային մասը՝ 20 %-ից մինչև 27 %, յուղայնությունը՝ 3 %-ից մինչև 30 %, ԳOUS 24901-89 կամ համարժեք: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	60	շաբաթական
14	**կոնֆետ**	կոնֆետ, կարամել	Կարամել կաթնային, պոմադային, մրգային, դոնդողային, դոնդողամրգային, նշակարկանդային, գրիլյաժային, պրալինե հավելանյութերով: Կախված կոնֆետի տեսակից խոնավության զանգվածային մասը՝ 4-25 %-ից ոչ ավել, փաթեթավորումը՝ նրբաթիթեղի և թղթի մեջ, չփաթաթված՝ հատավոր, կշռածրարված տուփերով, խառը տեսականիով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	շաբաթական	
15	**հնդկաձավար**	հնդկաձավար	Հնդկաձավար I կամ II տեսակների, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 %-ից ոչ պակաս: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	110	շաբաթական
16	**ոսպ**	ոսպ, ամբողջական	Երեք տեսակի, համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ (14,0-17,0) % ոչավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	30	շաբաթական

17	**Սպիտակաձավար (մանրի)**	**Սպիտակաձավար**	Սպիտակաձավար I կամ II տեսակների, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 %-ից ոչ պակաս: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված “Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70 %	կգ	38	շաբաթական
18	**ձավար**	**ձավար**	Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված, «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	30	շաբաթական
19	**կաթնաշոռ**	կաթնաշոռ դասական	Կաթնաշոռ 18 և 9,0% յուղի պարունակությամբ, թթվայնությունը՝ 210-240 ^{0}Т, փաթեթավորված սպառողական տարաներով, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	20	շաբաթական
20	**սոխ**	սոխ, գլուխ	Թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, ընտիր տեսակի, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳOUS 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	90	շաբաթական
21	**պանիր**	պանիր, լոռի	Պանիր պինդ, կովի կաթից, աղաջրային, սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջ-ների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	12	շաբաթական
22	**միս հավի**	հավի մսեղիք, պաղեցրած, տեղական, ամբողջական	Բրոյլեռ տիպի, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	280	շաբաթական

23	**հաճարաձավար**	հաճարաձավար	Ստացված հաճարի հատիկներից, հատիկներով խոնավությունը 15 %-ից ոչ ավելի, փաթեթավորումը՝ 50կգ ոչ ավելի պարկերով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	10	շաբաթական
24	**սիսեռ**	սիսեռ, ամբողջական	Սիսեռ, համասեռ, մաքուր, չոր խոնավությունը՝ (14,0-20,0) % ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	10	շաբաթական
25	**լոբի**	լոբի, հատիկավոր	Լոբի գունավոր, միագույն, գունավոր ցայտուն, չոր՝ խոնավությունը 15 %-ից ոչ ավելի կամ միջին չորությամբ՝ (15,1-18,0) %: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 50 %:	կգ	10	շաբաթական
26	**ալյուր**	բարձր տեսակի ցորենի ալյուր	Ցորենի ալյուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի: Առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 15 %-ից, մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածային մասը՝ չոր նյութի 0.55%, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 28,0%: ՀՍՏ 280-2007: Անվտանգությունը և մակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	190	շաբաթական
27	**դեղին ոլոռ**	ոլոռ, ամբողջական	Չորացրած, կեղևած, դեղին գույնի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	20	շաբաթական
28	**կանաչ ոլոռ**	ոլոռ, ամբողջական	Չորացրած, կեղևած, կանաչ գույնի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	20	շաբաթական
29	**չամիչ**	չամիչ	Չամիչ՝ չփաթեթավորված, դեղին, քաղցր: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	5	շաբաթական
30	**գարեձավար**	**գարեձավար**		կգ	38	շաբաթական
31	**վարսակաձավար**	**վարսակաձավար**	Առանց կողմնակի համի և հոտի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	32	շաբաթական
32	**վարունգ**	վարունգ	Վարունգ թարմ, օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	40	շաբաթական
33	**լոլիկ**	լոլիկ	Լոլիկ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ	կգ	30	շաբաթական

			հոդվածի			
34	**ծիրան**	ծիրան	Ծիրան թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, ԳOUS 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի”և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	30	շաբաթական
35	**դեղձ**	Դեղձ	Դեղձ թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, ԳOUS 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի”և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	10	շաբաթական
36	**խնձոր**	խնձոր, միջին չափի	Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	400	շաբաթական
37	**Տաքդեղ(պղպեղ)**	տաքդեղ, քաղցր	Ըստ իր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը նմակնշումը՝ ըստ ՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-իN 1913-Նորոշմամբհաստատված “Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի” և “Սննդամթերքիանվտանգությանմասին” ՀՀօրենքի 8-րդհոդվածի	կգ	10	շաբաթական
38	**սմբուկ**	սմբուկ	Սմբուկ թարմ: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	10	շաբաթական
39	**ձու**	ձու, 01 կարգ	Ձու սեղանի կամ դիետիկ, 1-ին կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահման ժամկետը՝ 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշմանը և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	հատ	1900	շաբաթական
40	**աղ**	աղ, կերակրի, մանր	բարձր տեսակի, յոդացված ՀUS 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս:	կգ	50	շաբաթական
41	**բուսական յուղ**	արևածաղկի ձեթ, ռաֆինացված, (զտած)	Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	l	65	շաբաթական
42	**ջեմ**	ջեմ, տեղական	տարբեր մրգերի, 1-ին տեսակի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	հատ	25	շաբաթական
43	**տոմատի**	տոմատի	Բարձր կամ առաջին տեսակների, ապակե կամ մետաղյա	հատ	50	շաբաթական

	մածուկ	մածուկ	տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ^3 տարողությամբ: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:			
44	**վանիլին**	վանիլին	Չոր, գործարանային փաթեթավորված, չափածրարված: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 50 %	հատ	42	շաբաթական
45	**թեյ**	թեյ, սև	Բայխաթեյ սև չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր: Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2, 2,5 և 3 գ փաթեթներով: «Փունջ», բարձրորակ և I տեսակների: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	տուփ	50	շաբաթական
46	**կակաո**	փոշի	Խոնավությունը՝ 6.0 %-ից ոչ ավելի, pH-ը՝ 7.1-ից ոչ ավելի, դիսպերսությունը՝ 90.0 %-ից ոչ պակաս, փաթեթավորված թղթե տուփերում և մետաղյա կամ ապակե բանկաներում, ինչպես նաև ոչ կշռաբաժանված: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	հատ	25	շաբաթական
47	**սոդա**	կերակրի	Մանր, սպիտակ, սննդում օգտագործվող համային հավելում: Չափածրարված գործարանային փաթեթավորմամբ ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան (0.5կգ): Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և ,Սննդամթերքի անվտանգության մասին, ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	տուփ	10	շաբաթական
48	**կանաչի**	կանաչի, խառը	Կանաչի տարբեր տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կապ	100	շաբաթական
49	**կիսել**	կիսել	Մրգային, թարմ, տուփերով: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և ,Սննդամթերքի անվտանգության մասին, ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	հատ	320	շաբաթական
50	**դափնետերև**	դափնետերև, չորացրած	Չորացրած դափնետերև, խոնավության զանգվածային մասը տերևում՝ 12 %-ից ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	հատ	10	շաբաթական
51	**շոկոլադե սալիկ**	**շոկոլադե սալիկ**	Թարմ, Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	հատ	130	շաբաթական
52	**մածուն**	մածուն, կովի կաթից	Թարմ կովի կաթից, յուղայնությունը 3%-ից ոչ պակաս, թթվայնությունը 65-1000Т,: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջներիտեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	լ	290	շաբաթական
53	**կաթ**	կաթ, պաստերացվ	Պաստերացված կովի կաթ 3 % յուղայնությամբ, թթվայնությունը՝ 16-210Т: Անվտանգությունը և մակնշումը՝	լ	400	շաբաթական

		ած	N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի			
54	**լոբի**	լոբի, կանաչ	Ընտիր կամ սովորական տեսակի։ Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմպտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	25	շաբաթական
55	**ծաղկակաղամբ**	**ծաղկակաղամբ**	Թարմ, օգտագործման տեսակի: : Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմպտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	30	շաբաթական
56	**դդմիկ(կաբաչկա)**	**դդմիկ(կաբաչկա)**	Թարմ, օգտագործման տեսակի: : Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմպտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	25	շաբաթական
57	**մառոլ(հազար)**	**մառոլ(հազար)**	Թարմ, օգտագործման տեսակի: : Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմպտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կապ	20	շաբաթական
58	**բողկ**	**բողկ**	Թարմ, օգտագործման տեսակի: : Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմպտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կապ	25	շաբաթական
59	**սխտոր**	սխտոր, գլուխ	Սովորական տեսակի, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	5	շաբաթական
60	**բլղուր**	բլղուր	Ձավար ցորենի I, II և III տեսակի, ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից։ Անվտանգությունը՝ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	10	շաբաթական

Մատակարարման պայմանները և ժամկետները՝	Մատակարարումներն իրականացվում են ըստ մատակարարման ժամկետների՝(օրեկան, շաբաթական) և ըստ պատվիրատուի կողմից սահմանված քանակների, նկատի ունենալով, որ մատակարարման առաջին պատվերի տրամադրման և մատակարարման միջև ընկած Ժամանակահատվածը չի կարող պակաս լինել 30 աշխատանքային օրից, եթե մատակարարը չի համաձայնում մատակարարումն իրականացնել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման քանակները սահմանում է Պատվիրատուն: Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Վաճառողը:
Պարտադիր պայման	բոլոր ապրանքները պետք է լինեն պահպանման ժամկետի մեջ մինչև ապրանքի սպառման օրը, հակառակ դեպքում մատակարարն ապահովում է ապրանքի հետ վերադարձը և փոխարինումը: *ապրանքը պետք է լինի չօգտագործված:*

ԳՆՈՐԴ **ՎԱՃԱՌՈՂ**

«Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

Հասցե՝ ք.Ծաղկաձոր, Խ.Կեչառեցու 1ա

ՀՎՀՀ 03008231

Արարատ բանկ ԲԲԸ

ՀՀ 1510003052690100

Տնօրեն՝ Մ.Ասատրյան

Հավելված 2
_____2015թ. N ԾՔ-ՇՀԱՊՁԲ-15/1
ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2015 թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	հաց, հրազդան	Կգ		300		400		350		350		1400	
2	կարագ, սերուցքային	կգ		40		40		40		40		160	
3	կաղամբ, մաքրած	կգ		90		90		120		80		380	
4	թթվասեր, տեղական	կգ		5		5		5		5		20	
5	մակարոն	կգ		70		60		60		60		250	
6	կարտոֆիլ	կգ		400		400		400		400		1600	
7	Ճակնդեղ, արմատապտուղ	կգ		20		30		25		15		90	
8	գազար	կգ		20		36		25		15		96	
9	տավարի միս, տեղական ոսկրո	կգ		30		25		25		30		110	
10	վաֆլի	կգ		15		15		10		10		50	
11	շաքարավազ սպիտակ	կգ		120		110		110		110		450	
12	բրինձ	կգ		40		40		35		35		150	
13	թխվածքաբլիթ	կգ		15		15		15		15		60	
14	կոնֆետ, կարամել			5		5		5		5		20	

15	հնդկաձավար	կգ		30		30		25		25		110	
16	ոսպ, ամբողջական	կգ		9		7		7		7		30	
17	**Սպիտակաձավար**	կգ		12		9		9		8		38	
18	**ձավար**	կգ		9		7		7		7		30	
19	կաթնաշոռ դասական	կգ		5		5		5		5		20	
20	սոխ, գլուխ	կգ		25		25		20		20		90	
21	պանիր, լոռի	կգ		3		3		3		3		12	
22	հավի մսեղիք, պաղեցրած, տեղական, ամբողջական	կգ		70		70		70		70		280	
23	հաճարաձավար	կգ		3		2		3		2		10	
24	սիսեռ, ամբողջական	կգ		3		2		3		2		10	
25	լոբի, հատիկավոր	կգ		3		2		3		2		10	
26	բարձր տեսակի ցորենի ալյուր	կգ		50		45		45		50		190	
27	ոլոռ, ամբողջական	կգ		5		5		5		5		20	
28	ոլոռ, ամբողջական	կգ		5		5		5		5		20	
29	չամիչ	կգ		2		1		1		1		5	
30	**գարեձավար**	կգ		10		7		7		7		38	
31	**վարսակաձավար**	կգ		8		8		8		8		32	
32	վարունգ	կգ		-		-		30		10		40	
33	լոլիկ	կգ		-				20		10		30	
34	ծիրան	կգ		-		15		15		-		30	

35	Դեղձ	կգ		-		-		10		-		10	
36	խնձոր, միջին չափի	կգ		100		100		100		100		400	
37	տաքդեղ, քաղցր	կգ		-		-		7		3		10	
38	սմբուկ	կգ		-		-		7		3		10	
39	ձու, 01 կարգ	հատ		500		500		500		400		1900	
40	աղ, կերակրի, մանր	կգ		14		12		12		12		50	
41	արևածաղկի ձեթ, ռաֆինացված, (զտած)	լ		20		15		15		15		65	
42	ջեմ, տեղական	հատ		8		6		6		5		25	
43	տոմատի մածուկ	հատ		14		12		12		12		50	
44	վանիլին	հատ		12		10		10		10		42	
45	թեյ, սև	տուփ		14		12		12		12		50	
46	փոշի	հատ		8		6		6		5		25	
47	կերակրի	տուփ		4		2		2		2		10	
48	կանաչի, խառը	կապ		20		30		30		20		100	
49	կիսել	հատ		90		70		70		90		320	
50	դափնետերև, չորացրած	հատ		3		3		2		2		10	
51	**շոկոլադե սալիկ**	հատ		-		70		60		-		130	
52	մածուն, կովի կաթից	լ		75		70		70		75		290	
53	կաթ, պաստերացված	լ		100		100		100		100		400	
54	լոբի, կանաչ	կգ		-		10		15		-		25	

55	**ծաղկակաղամբ**	կգ		-		10		10		10		30	
56	**դդմիկ(կաբաչկա)**	կգ		-		10		10		5		25	
57	**մառոլ(հազար)**	կապ		-		7		7		6		20	
58	**բողկ**	կապ		-		10		10		5		25	
59	սխտոր, գլուխ	կգ		2		1		1		1		5	
60	բլղուր	կգ		3		2		3		2		10	

ԳՆՈՐԴ **ՎԱՃԱՌՈՂ**

«Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

Հասցե՝ ք.Ծաղկաձոր, Խ.Կեչառեցու 1ա

ՀՎՀՀ 03008231

Արարատ բանկ ԲԲԸ

ՀՀ 1510003052690100

Տնօրեն՝ Մ.Ասատրյան

Հավելված 3
« _____2015թ. N ԾՔ-ՇՀԱՊՁԲ-15/1
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	«Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար սննդամթերք	**...%**	...%	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	**100 %**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

ԳՆՈՐԴ **ՎԱՃԱՌՈՂ**

«Ծաղկաձորի նախադպրոցական
ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

Հասցե՝ ք.Ծաղկաձոր, Խ.Կեչառեցու 1ա

ՀՎՀՀ 03008231

Արարատ բանկ ԲԲԸ

ՀՀ 1510003052690100

Տնօրեն՝ Մ.Ասատրյան

Հավելված 4

«..... ..... 2015թ. N ԾՔ-ՇՀԱՊՁԲ-15/1

ծածկագրով պայմանագրի

Կապալառու	Պատվիրատու
_____	_____
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը_____	գտնվելու վայրը_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

.... 20.....թ.

Պայմանագրի անվանումը՝ .....:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ .... 20.....թ

Պայմանագրի համարը՝ .....

Պատվիրատուն, ի դեմս ....., և Կապալառուն, ի դեմս ...., հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կապալառուն .... 20.....թ.-ից .... 20.....թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքը

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշները	Կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
_____	_____
(Ազգանուն, Անուն)	(Ազգանուն, Անուն)